ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 232 Ա

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ (ԳԵՐԱՎՃԱՐ) ՀԱՇՎԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հ. Հարությունյանի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Քաղաքացի Հարություն Աշոտի Հարությունյանի կողմից Եղեգիս համայնքի բյուջե վճարված 12862 (տասներկու հազար ութ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ գումարի չափով գերավճարի հաշվին իրականացնել հաշվանցում (12862 ՀՀ դրամ գերավճարը առաջացել է HYUNDAI ELANTRA SEL 2.0 մակնիշի 70HT077 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը 13/07/2023թ. օտարելու արդյունքում):

2.Հանձնարարել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել գումարի հաշվանցումը հարկ վճարողին պատկանող MITSUBISHI PAJERO IO 1.8 մակնիշի 70OG077 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի հարկային պարտավորությունների մարմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հոկտեմբերի 19 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 233 Ա

10-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին և 3)-րդ կետերի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի ղեկավարի 10-ը հունվարի 2025 թվականի «Ինքնակամ կառույցներն օրինականացնելու մասին» թիվ 04Ա որոշման բովանդակության 1-ին կետում «245,8» թիվը փոխարինել «193,2» թվով:

2.Եղեգիս համայնքի ղեկավարի 10-ը հունվարի 2025 թվականի «Ինքնակամ կառույցներն օրինականացնելու մասին» թիվ 04Ա որոշման բովանդակության 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ՝ «3.Օրինականացման համար սահմանված վճարը 193,2ք/մ ընդհանուր մակերեսով կառույցների համար գումարը կազմում է 100 617,92 ՀՀ դրամ, որից 13,7 ք/մ մակերեսով օժանդակ կառույցի համար գումարը կազմում է 16 916,16 ՀՀ դրամ, և 179,5 ք/մ մակերեսով բնակելի տան համար 96 212 ՀՀ դրամ: Ընդհանուր՝ 100 617,92 ՀՀ դրամը պետք է մուծվի 900 355 124 109 հաշվեհամարին:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հոկտեմբերի 25 ք.Եղեգիս